

## ԱՊՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ Խ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ՄԵԼԱՆՅԱ Բալայան

*Պատմական գիտությունների թեկնածու*

*Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն*

IX դարի երկրորդ կեսին Հայաստանում վերականգնվել էր ինքնուրույն պետականությունը՝ հանձինս Բագրատունյաց թագավորության, որը, սակայն, թշնամաբար տրամադրված արաբա-բյուզանդական պետությունների միջև գոյություն ունեցող քաղաքական մրցակցության պայմաններում չէր կարող կայուն լինել, քանի որ այն ուղղված էր նաև հայ իշխանների քաղաքական միության դեմ: Արդյունքում՝ պետականության գլուխ կանգնած Բագրատունի թագավորներն ստիպված էին պարբերաբար պայքարել Հայաստանի հզորացնանը խոշընդոտող և հարևան տերությունների կողմից հովանավորվող կենտրոնախույս ուժերի դեմ: Այնուհանդերձ, ստեղծվեցին հայկական մի շարք իշխանություններ, որոնք աստիճանաբար ձեռք էին բերում թագավորության կարգավիճակ: Դրանց շարքին էր պատկանում Աղվանքի կամ Հայոց Արևելից կողմանց իշխանությունը, որի գլուխ կանգնած Բագրատունիները ևս ձեռք էին բերել թագ կրելու իրավունք՝ հանձին Բագրատունի Համամ Արևելցու<sup>1</sup>: Այս փաստին անդրադարձել է նաև Կոնստանտին Յուլետրման իր «Կովկասյան Աղվանքը 10-րդ դարում» ուսումնասիրության մեջ<sup>2</sup>:

Քաղաքական այս մասնատումը, բնականաբար, լուրջ վտանգ էր ներկայացնում նաև Եկեղեցական հաստատության մասնատման համար: IX դարի վերջին Աղվանից «ինքնակոչ» կարողիկոսների հայտնվելը հոգևոր առաջնորդության գլուխ, թվում է, հենց ասվածի վկայություններից է: Սակայն, իհմք ընդունելով աղբյուրների հաղորդած տեղեկությունները, հարկ է նկատել, որ Աղվանից Եկեղեցին շարունակաբար մնաց որպես Հայոց Եկեղեցուն ենթակա արքեպիսկոպոսություն:

902 թվականին վախճանվում է Աղվանից կաթողիկոս Յովիանը և կաթողիկոս է ձեռնադրվում Սիմեոն Բ-ն (902-923թթ.): Առկա բոլոր աղբյուրները դրականորեն են խոսում վերջինիս գործունեության վերաբերյալ: Սակայն Սիմեոն Բ-ի կաթողիկոսությունը նսեմացնող մեկ համգամանք գոյություն ուներ. նա ձեռնադրությունն ստացել էր իր միայն Ենթակա Եպիսկոպոսներից և ոչ՝ ընդունված կարգի համաձայն՝ Հայոց կաթողիկոսից: Նույն իրավիճակն էր նաև նրան հաջորդած Փառհսոսի Տեր Դավիթ Եպիսկոպոսի (923-930թթ.)՝ Մեծ Կողմանքի Եպիսկոպոս Տեր Սահակի (930-948թթ.) ժամանակներում:

<sup>1</sup> Տե՛ս Հ.Ա.Հարությունյան, Հայաստան 9-11-րդ դարերում, Եր., 1959, էջ 31:

<sup>2</sup> Constantin Zuckerman, L'Albanie caucasienne au X siècle, Travaux et Mémoires 13, Paris, 2000, p. 563-592.

Ստ. Օրբելյանը, խոսելով Սյունյաց և Աղվանից եկեղեցական թեմերի հիշյալ շրջանուն գոյություն ունեցող հարաբերությունների մասին, նշուն է, որ «Եր կաթողիկոս յԱղվանս Սահակ անուն, որ հոգևորական սիրոյ կապակցութեամբ յարակցեալ էր Տեառն Յակոբայ. և էին միմեանց համախոհ և յոյժ մերձաւոր»<sup>1</sup>: Պատմիչը դրական է գնահատում երկու հոգևոր թեմերի «խիստ մոտ» հարաբերությունը, եւ, միաժամանակ ներկայացնելով դրա օբյեկտիվ պատճառները, որու ակնարկ չի կատարում հիշյալ թեմերի մերձեցումը վերագրելու՝ որպես Յայոց Արողից անջատվելուն ուղղված ձեռնարկում:

948 թվականին Յայ Աղվանից Սահակ կաթողիկոսին հաջորդեց Գարդման գավառի Եպիսկոպոս Տեր Գագիկը (948-958թթ.): Ինչպես Մ.Դասխուրանցին, այնպես և Կ. Գանձակեցին, տարաբախտաբար, Տեր Գագիկի գործունեության վերաբերյալ առանձին տեղեկություններ չեն հաղորդում, որի պատճառով և ստիպված ենք բավարարվել միայն Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկություններով, որոնք պահանջում են քննական մոտեցում ունենալ խնդրո առարկա հարցի կապակցությամբ, քանի որ նույն աղբյուրի մեջ կան հակասական տեսակետներ:

Պատմագիրը նշում է, որ «Եւ յետ Սահակայ առաջնորդէր Գագիկ՝ Եղբայր նորին. և սա առաւել համարձակեալ էր ի սկզ միաբանութեան ընդ Յակոբայ՝ Սիւնեաց Եպիսկոպոսսի»<sup>2</sup>: Իսկ Անանիա Մոլացին գրել է. «...Վախճանէր ապա կարծեալ հայրապետն Աղուանից՝ Սահակն կոչեցեալ, և թողոյր փոխանակ ինքեան զիարազատ իւր՝ զԳագիկ՝ նովին թերակատար ձեռնադրութեամբն, զոր ինքն ուներ առանց սրբոյ Լուսաւորչին և մերոյ աթոռակալացն. այր համեստ և գեղեցկադէմ և չափաւոր հասակաւ»<sup>3</sup>: Ա.Մոլացու նաև հետագա շարադրանքից կարելի է նկատել, որ հայոց հայրապետը, այնուամենայնիվ, չէր թաքցնում իր համակրանքը Յայ Աղվանից Գագիկ կաթողիկոսի նկատմամբ, որը նույնպես անօրինական ձեռնադրություն ընդունած կաթողիկոսների թվին էր պատկանում:

Ահա այսպես, Յովնան Եպիսկոպոսից սկսած՝ Աղվանից կաթողիկոսական աթոռին մեկը մյուսի Ետևից բազմեցին կաթողիկոսներ, որոնք իրենց օրինական ձեռնադրությունը չէին ստացել հայոց հայրապետից: Պահպանված աղբյուրներում Յայ Աղվանից հիշյալ կաթողիկոսների ձեռնադրությունը Ենթակա Եպիսկոպոսներից գնահատվում է որպես Յայոց

<sup>1</sup>Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Ախալքան Միսական, Թիֆլիս, 1911, էջ 274:

<sup>2</sup>Ստ. Օրբելյան, էջ 274:

<sup>3</sup>Տեառն Ամանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցեն ձեռնադրութիւնն արտաքրություն լուսավորչի աթոռոյն, Յավելուած Արարատի, 1897, մարտ, էջ 133:

Եկեղեցական ընդհանուր օրենքին հակասող երևոյթ, քանի որ ընդունված կարգի համաձայն, նրանք պետք է ձեռնադրություն ստանային հայոց հայրապետներից, մի կարգ, որ գոյություն ուներ Եկեղեցական հաստատության հիմնադրման պահից ի վեր:

Արդարև, այս իմաստով Աղվանից հիշատակված կաթողիկոսների ընդունված կարգին հակասող ձեռնադրությունը պետք է համարել անընդունելի, անգամ դատապարտելի քայլ, քանի որ այն իր հերթին կդառնար արաբա-բյուզանդական կողմերի՝ Հայաստանը քաղաքականապես մասնատելուն ուղղված քաղաքականության իրագործման լուրջ խթան:

Հայ ժողովրդի պատմությունը շարահարող վարդապետ-պատմիչները սերունդներին ավանդել են այն պարզ ճշնարտությունը, որ ազգի հզորության աղբյուրը նրա հոգևոր ու բարոյական միասնության մեջ է: Եվ այդ գիտակցությամբ էլ մեր հոգևոր նվիրապետներն աշխատել են հնարավորինս կայուն պահել ժողովրդի հոգևոր-բարոյական միասնությունն անգամ քաղաքական մասնատվածության պայմաններում, հիշյալ ասպարեզում ամեն մի, թեկուզ աննշան խախտում որակելով որպես դավաճանության համահավասար արարք: Բայց և միաժամանակ պետք է նկատել, որ նրանք հաճախ անտեսում էին երկրում տիրող քաղաքական իրավիճակը և միանգամայն անզիջում կեցվածք ընդունում Եկեղեցական թեմերի ինքնուրույն գործունեության նկատմամբ: Այս տեսանկյունով կարելի է նեկանքանել նաև X դարի սկզբին ստեղծված կացությունը, երբ Հայ Աղվանից կաթողիկոսները պարզապես ստիպված էին ձեռնադրություն ընդունել միայն ենթակա եպիսկոպոսներից, քանի որ նույն ժամանակներում աստանդական վիճակում էին հայտնվել նաև Ամենայն Հայոց հայրապետները՝ Մայր Աթոռին սպառնացող քաղաքական արհավիրքների պատճառով: Այդպես էին Գևորգ Բ Գառնեցու /877-897թթ./, Մաշտոց Եղվարդեցու /897-898թթ./, Շովիաննես Դրասխանակերտցու /898-929թթ./, Ստեփանոս Բ Ռշտունու /929-930թթ./, Թեոդորոս Ա Ռշտունու /930-941թթ./ ժամանակներում<sup>1</sup>:

Թերևս տվյալ ժամանակների հետ առնչվող մի շարք փաստարկներից պետք է նկատել, որ Հայոց Եկեղեցու արևելյան թևի կաթողիկոսների ընդունված կարգին հակառակ՝ ձեռնադրությունը բացատրվում է լոկ քաղաքական աննպաստ պայմաններով. աստանդական վիճակում հայտնված Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից ձեռնադրություն ընդունելու անհնարինության և կամ, երբեմն մեծ դժվարությունների հետ կապված լինելով, բայց ոչ Հայոց Եկեղեցուց անջատվելու միտումով: Հիշյալի

<sup>1</sup> Stev. Բ. Ուղութարյան, Հայոց Արևելից Եկեղեցին և մշակույթը, Եր., 1998, էջ 165:

վկայություն է նաև Ստ. Օրբելյանի հետևյալ գրառումը. «Եւ զի կաթողիկոսք Յայոց հեռացեալ էին յայն ժամանակի զի վասն հանապազորդեան հինահարութեանցն իսմայէլացւոց թողեալ էին զաթոռն որ ի Դվին և շրջէին այսր և անդր ընդ թագաւորացն Յայոց: Երբեմն բնակէին առ Գագկայ թագաւորին ի Վասպուրական աշխարհի, ի վասն Զորոյ, ուր կայր սեղամն և աթոռն և գաւազան սրբոյն Գրիգորի. Երբեմն՝ բնակէին ի Շիրակ գավառի Առ Շիրակավանին ի վանսն Արգինայի. և այսպէս տարաբերեալք լինեին»<sup>1</sup>: Նկարագրելով Յայոց կաթողիկոսների աստանդական վիճակը՝ Ստ. Օրբելյանը մի կողմից կարծես փորձում է արդարացնել Սյունյաց Յակոբ Եպիսկոպոսի Յայ Աղվանից կաթողիկոսից մեռոն ընդունելու հանգամանքը, սակայն մյուս կողմից այն համարում է «մեծ գայթակղութիւն և անկանգնելի գլորումն»<sup>2</sup>:

Եվ անդարածնալով Յայ Աղվանից հոգևոր առաջնորդության կողմից Սյունիքի Եպիսկոպոսի խնդրանքը անմիջապես իրագործելու, ինչպես նաև, ձեռնադրության հանգամանքին, պատմագիրը իրավացիորեն նշել է. «արքեպիսկոպոսոքն Աղվանից ի Յայոց կաթողիկոսացն առնուին ձեռնադրութիւն. և սակաւ մի ամօք յառաջ քան զայս ետս էին կացեալ՝ ի Վախճանէն Գերգեայ կաթողիկոսին մինչ ի ժամանակս այս Անանիայի»<sup>3</sup>: Այնուհետև Օրբելյանը, կարծես ինքն իրեն լրացնելու, թերևս նաև, ուղղելու մտայնությամբ, հետևյալն է գրել. «... Իսկ ի Վախճանէն Գերգայ, վասն դառն և ազգի ազգի անցից աշխարհիս յիսմայէլականացն, ոչ կարացին հասանել առ հայրաբետքն Յայոց յԱղվանից. նմանապէս և անփոյթ լինէր ի Յայոց կաթողիկոսացն. զի ամենայն ոք միայն զանձին հնարս հայթիայթէր զերծման յիսմայէլական սրբոյն: Զեռնադրեն ապա կաթողիկոս Աղվանից յետ Յօնանու զնորին հարազատն Սիմեոն անուն, ապա զԴավիթ, ապա զՍահակ, ապա զԳագիկս զայս, որ լինէր ամք 69 ինքնաձեռն և անձնիշխան թերակատար օծման նոցա»<sup>4</sup>:

Ուրեմն պատմիքը քաղաքական պատճառներով է բացատրում Աղվանից կաթողիկոսների «ինքնաձեռնադրական թերակատար օծումը»: Միաժամանակ, չարդարացնելով այն, չի համարում Ամենայն Յայոց կաթողիկոսությունից երես դարձնելու կամ լրիվությամբ անջատվելու միտում, որպիսին ներկայացված է Աբրահամ Զամինեանի աշխատության մեջ. «Իսկ Աղուանք մօտ 70 տարի արդէն դադարել էին Յայոց կաթողիկոսներից ձեռնադրութիւն առնել... Արդ Անանիա կաթողիկոսը

<sup>1</sup> Ստ. Օրբելյան, էջ 274-275:

<sup>2</sup> Սույն տեղում, էջ 275:

<sup>3</sup> Սույն տեղում, էջ 276:

<sup>4</sup> Սույն տեղում, էջ 281-282:

Գագիկ ու Աբաս թագաւորների յորդորներից քաջալերուած՝ վճռում է և Լուսաւորչի հօտից բաժանուած ու օտարացած ժողովորդին կրկին միացնել Հայոց Եկեղեցու հետ և նրա նախնական միութիւնը անխախտ պահպանել»<sup>1</sup>: Հետաքրքիր է, որ «օտարացած ժողովորդի» մասին է խոսքը և կամ ուրիշ ինչ փաստարկներ կան այդ «օտարանալու» վերաբերյալ: Երկիրը կարող է ենթարկվել քաղաքական մասնատման, օտարի տիրապետության, բայց ժողովուրդը «օտարանալ» ինքն իրենից՝ թերևս անգամ տրամաբանական չէ, որովհետև այդ նույն ժողովուրդը մշտապես հավատարիմ է մնացել իր հավատքին, հետևաբար նաև իր արմատներին:

Այդպիսի հակասական տեսակետ զարմանալիորեն արտահայտել է նաև Մաղաքիա Օրմանյանը՝ գրելով. «Ծատոնց ծանոթ էր Աղվանից արուոհն հակամիտութիւնը, որ Հայոց հայրապետութեան հետ ունեցած կապակցութիւնը խօֆ և ինքնազլուխ կաթողիկոս ըլլա և ոչ թէ Հայոց աթոռին ներքև իբրև լոկ արքեպիսկոպոսութիւն սեպուիշ»<sup>2</sup>:

Հարցի քննությունը պահպանված աղբյուրների հիման վրա երբեք այդպիսի լուծման չի հանգեցնում: Համենայնդեպս, եթե երբեմն Աղվանից աթոռի կողմից դրսնորվել են որոշակի շեղումներ, այն էլ արտաքին քաղաքական տարաբնույթ ճնշումներով պարտադրված, ապա երբեք համընդհանուր ու նպատակային անջատողական միտումներ չեն նկատվել: Աղբյուրների հաղորդման համաձայն՝ ինքը՝ Հայոց Մայր Աթոռը, երբեմն որոշ կաթողիկոսների ազդեցության տակ դեպի քաղկեդոնականությունը թեքվելու փորձության է ենթարկվել, որը, համենայնդեպս, հիմք չի տալիս պնդելու, թէ Հայոց Եկեղեցին հակվել է դեպի քաղկեդոնականությունը: Նույն դրությունն էր նաև Աղվանից Եկեղեցու համար, և դա հիմնավորել ու ներկայացնել, թէ Աղվանից կաթողիկոսությունը միշտ էլ փորձում էր դուրս գալ Ամենայն Հայոց նվիրապետության ենթակայությունից, կարծում ենք, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, և Ս.Օրմանյանը այդ տեսակետն արտահայտել է լոկ ընդհանուր երևույթների ազդեցության տակ՝ առանց վկայակոչելու որևէ հիմնավոր աղբյուր: Իր տեսակետը կարծես հիմնավորելու միտումով՝ Ս.Օրմանյանն այնուհետև շարունակել է. «Հայաստանի շփոթ և ընկճեալ վիճակը և կաթողիկոսներուն տարտան և թափառական աստանականութիւնը, և իրենց ազդեցութեան նուազիլը նոր պատեհ ընծայեցին աղուաններուն՝ իրենց հնամենի ջանքը վերսկսելու, և Սահակ Աղուանից կաթողիկոս նորէն ոյժ տուավ այդ նպա-

<sup>1</sup> Աբր. Զամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, Նոր Նախիջևան, 1908, էջ 167:

<sup>2</sup> Ս.Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, մաս Գ, Պեյրութ, 1961, էջ 1088:

տակին: Որպեսզի ավելի օրուար ընէ իր գործը, իրեն օգնականներ ալ սկսաւ որսալ, և Հայաստանի հիւսիսային կողմերը իր ազդեցութեան ներքեւ առնել»<sup>1</sup>: Ակնհայտ է, որ «Հայաստանի հյուսիսային կողմերը» ասելով նա ի նկատի ուներ Սյունյաց թեմի առաջնորդ Հակոբի ձեռնադրությունն Աղվանից կաթողիկոսից, որի նկատմանք, թեկուզ քննական մոտեցում է ունեցել նաև Սյունիքի պատմության շարահարողը, սակայն ճշմարտացիորեն ներկայացրել է նաև արդարացուցիչ հանգամանքներ պարունակող քաղաքական կացությունը:

Չպետք է մոռանալ նաև մեկ այլ հանգամանք, որ եթե Աղվանից կաթողիկոսությունը որևէ կերպ անջատողական ձգտում ունենար, ապա դրան նպաստող քաղաքական պայմանները թերևս նույնպես առկա էին. նախ և առաջ երկրի քաղաքական մասնատվածության հետևանքով ստեղծված Հայոց Արևելից ինքնուրույն թագավորությունը, որ ինքնուրույն կաթողիկոսության հիմնավոր պատվարներից էր և որը, սակայն, պատմագրի վկայությամբ, երբեք չի ընդունել Հայոց Եկեղեցական հաստատությունից որևէ կերպ անջատվելու և ինքնուրույնություն ունենալու տարրերակը:

Ասպածի վկայություններից պետք է ընդունել վերը նշված մեջբերումը՝ կապված Սամվել Եպիսկոպոսի ինքնուրույն ձեռնադրության հետ, որի դեմ ընբոստացել էին Աղվանից աշխարհիկ տերերը: «Պակաս համոզիչ վկայություն չէ նաև հենց ինքնուրույն թագավորության հիմնադիր Համան Բարեպաշտի վերաբերմունքը հիշյալ խնդրի առնչությամբ, երբ Հայոց արևելից իշխանի թախանձանքի շնորհիվ Գևորգ Բ Գառնեցին վերահաստատեց ինքնուրույն կաթողիկոս հրչակված Հովհաննին: Եվ երկրորդ, ինչպես Ստ. Օրբելյանն է իրավացիորեն նշել, որ Աղվանքն անփութորեն անտեսվում էր հայոց կաթողիկոսների կողմից, քանի որ յուրաքանչյուր ոք միայն իր անձի համար էր հնարներ փնտրում իսմայելական սրից ազատ մնալու համար»<sup>2</sup>:

Հիշյալի կապակցությամբ շատ բնորոշ ու արտահայտիչ ձևակերպում է կատարել Բ.Ռւլուբաբյանը. «Այդ կաթողիկոսները բառացիորեն թափառական էին, գավառից գավառ էին փախչում, վանքից վանք և իրենք իսկ չգիտեին, թե որտեղ են գլուխ դնելու հաջորդ օրը... Այս դեպքում նրանց որտե՞ղ այցելեին այս Արցախի ու Սյունիքի ամբարտավանացած առաջնորդները»<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է Ս.Օրմանյանին, ապա իր տեսակետը հավանաբար հիմնավորելու միտումով այնուհետև գրել է. «Միւս կողմէն այդ կողմի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 431:

<sup>2</sup> Stv' Ստ.Օրբելյան, էջ 281:

<sup>3</sup> Բ.Ռւլուբաբյան, Հայոց Արևելից Եկեղեցին և մշակույթը, էջ 164: Ս.Օրմանյան, էջ 431:

իշխանները, ամենքն ալ Բագրատունի սերունդէ, չեին սիրէր անուղղակի կերպով Արծրունի իշխաններու ազդեցութեան ներքև ըլլալ, որոնց հովանավորութեան ենթարկեալ էին Աղթամար նստող վերջին կաթողիկոսները»<sup>1</sup>: Բնականաբար խոսքը վերաբերում է Յայ Աղվանից իշխաններին, սակայն պարզ չէ, թե կոնկրետ ո՞ր աղբյուրն է հաղորդում նրանց ու Արծրունիների միջև գոյություն ունեցող հակասությունների մասին: Իսկ ինչ վերաբերում է նրանց կողմից տեղի հոգևոր նվիրապետներին Ամենայն Յայոց Մայր Աթոռին հակադրելու միտումներին, ապա այստեղ փաստերը բոլորովին հակառակն են հաղորդում: Յայ Աղվանից Յաման Բագրատունի իշխանի արարքը, կապված Ամենայն Յայոց Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին գերությունից ազատելու հետ, արժանի է միայն գովեստի ու մեծարման, վկայություն է Ամենայն Յայոց հայրապետի նկատմամբ տածած անսահման նվիրվածության ու խոնարհումի: Իսկ նրա հաջորդ և նույնպես աստանդական վիճակում հայտնված ու Յայոց Արևելից կողմերուն որոշ ժամանակ ապրած Յովիհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը որևէ ակնարկ անգամ չի կատարել հիշյալ Երկրամասի աշխարհիկ տերերի կողմից հանդես բերած անբարյացկամ վերաբերնունքի մասին: «Սակա այնորիկ և ես ըստ տէրունեանն հրամանի հալածեալ շրջեցայ ի քաղաք ի քաղաք ի կողմանս արևելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ Երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսէի, որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու. զի և նոքա ի ժողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին: Եւ ի նոցանէն ոչ ինչ սակաւ ծախս ռոճկաց ըստ իրաբանչիւրունն սակի կարգէր մեզ պարտապանաբար վճարելով զպէսս ամենեցունց»<sup>2</sup>:

Կարծում ենք հիշյալից դժվար չէ ենթադրել, որ հայրապետն անգամ իր գոհունակությունն է հայտնում Յայոց Արևելից աշխարհիկ տերերին, որոնք չեին խնայում իրենց միջոցներն աստանդական վիճակում հայտնված հոգևոր առաջնորդարանի կարիքների համար: Ինչ վերաբերում է Յայ Աղվանից Եկեղեցու հիշյալ շրջանուն ունեցած անջատական ձգտումներին, ապա դրանց փաստացի առկայության պայմաններում անհնար էր, որ կաթողիկոսը որևէ ակնարկ չկատարեր այդ մասին:

Յիշյալ տեսակետը հիմնավորող վկայություն, բարեբախտաբար, հանդիպում ենք նաև իենց քննարկվող ժամանակաշրջանում Յայոց Մայր Աթոռը առաջնորդած Անանիա Մոկացու մոտ. «Իսկ մեք՝ վասնզի ոչ էր ըստ հրամանի աստուծոյ և ոչ ուներ ձեռնադրութիւն ի մենց՝ ոչ ընկալաք

<sup>1</sup> Ս.Օրմանյան, էջ 431:

<sup>2</sup> Յովիհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1996, էջ 220.

զնա և ոչ հրաման տուաք ուրուք յիշխանաց ընդունել զնա: Իսկ զնախնեացն բարենտութիւն և զիարցն դաւանութիւն, որ կայր յԱղուանից Պատմութեանն, գիտելով իշխանացն Աղուանից, որ լիեալ էր առ նախնեօք ընդայլ սրբոյ Լուսաւորչին աթօ(Բ)ռակալաց, ոչ ընկալան զնա»<sup>1</sup>:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 9-րդ դարի երկրորդ կեսից սկսած, քաղաքական հանգամանքների թելադրանքով, թուլացել էին կապերը մի կողմից՝ Ամենայն Հայոց կարողիկոսության, մյուս կողմից՝ ծայրամասային թեմերի միջև: Արդյունքում՝ ծայրամասային որոշ թեմեր, այդ թվում՝ Հայ Աղվանից և Սյունյաց թեմերը ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն, որը, սակայն, երբեք չի հասցրել ամբողջական մեկուսացման կամ անջատման: Եվ X դարի երկրորդ կեսին, կապված Բագրատունյաց հայկական քագավորական իշխանության հզորացման հետ, վերստին կանոնակարգվեց Հայոց Մայր Աթոռի գործունեությունը:

946թ. Հայոց հայրապետ ընտրված Անանիա Մոկացի կաթողիկոսը (946-967թթ.) ջանք ու եռանդ չի խնայել վերստին վերականգնելու Հայոց Եկեղեցու Մայր Աթոռի ու նրա ծայրամասային թեմերի միջև գոյություն ունեցող նախկին հարաբերություններն ու միասնությունը վերականգնելու, և այդ նպատակին ուղղված միջոցառումներն ամբողջությամբ բարեհաջող ավարտ ունեցան, քանի որ դրանց դիմակայող լուրջ խոչընդուներ չհանդիպեցին: Այստեղ տեղին է մեջ բերել հայ պատմագրության կարկառուն ներկայացուցիչներից Ս. Ուրիհայեցի վարդապետի աշխատության հետևյալ տողերը. «Արդ այս ամենայն խռովութեանցս և հանդէս բարկութեանս ոչ կարաց մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի խորին աշխարհ Հայոց, որ է աթոռ սրբոյ առաքելոյն Թաղէոսի: Արդ այս ամենայն յայն աշխարհի ոչ եղև բաժանումն սրբոյ աթոռոյն, այլ մնաց անշարժ հաստատութեամբ, հայրապետութեամբ և քագաւորութեամբ»<sup>2</sup>:

Քննարկվող հարցի հստակեցման նկատառումով, անդրադառնալով հայ պատմագրության մեկ այլ ականավոր ներկայացուցչի՝ Կ. Գանձակեցուն, կրկին կարող ենք համոզվել վերոհիշյալ տեսակետի հավաստիության մեջ: Կ.Օհանջանյանը գորել է. «Կ.Գանձակեցու պատմությունը, անշուշտ, շատ արժեքավոր է հայ-աղվանական Եկեղեցու ներքին կյանքի, Եկեղեցական նվիրապետության, ծիսական խնդիրների, վանական դպրոցների և դպրության... պատմության համար»<sup>3</sup>: Աղվանից Եկեղեցու պատմությանը նվիրված գլխում հաջորդական կարգով նշված են Աղվանից Եկեղեցու կաթողիկոսները, ընդ որում՝ ընդգծված են նաև այս

<sup>1</sup> Անանիա Մոկացի, էջ 133:

<sup>2</sup> Սատրեն Ուրիհայեցի, ժամանակագրութիւն, Եր., 1991, էջ 230-231:

<sup>3</sup> Տե՛ս Նոյն տեղում, էջ 27 - 28:

կաթողիկոսները, որոնք ձեռնադրություն են ստացել Հայոց կաթողիկոսներից, իսկ հիշյալ ձեռնադրությունը չստացած կաթողիկոսների վերաբերյալ որևէ ակնարկ անգամ չկա Հայոց կաթողիկոսությանը նրանց չենթարկվելու և կամ հակադրվելու վերաբերյալ: Եվ սա այն դեպքում, երբ պատմիչը առանձնակի ուշադրություն է դարձրել նաև ձեռնադրություն ընդունելու եկեղեցակարգի վրա, հավանաբար դրան կարևորագույն նշանակություն վերագրելու տեսանկյունով: «Եւ մինչդեռ ի գերութեան էր Գերօգ, սա (Եպիսկոպոս Տեր Հովհանն-Ս.Բ.) զայ յԱղուանս և անդէն ձեռնադրի առանց կամաց տեառն Գերօգայ. և իբրև գնեցին զտէր Գերօգ իշխանքն Աղուանից, լուծան զՅովնան ի պատույն, բայց աղաչեալ զնա իշխանացն Աղուանից վասն երախտեացն, որ առ նա, կրկին ձեռնադրէ զնա ևս»<sup>1</sup>: Կարծում ենք պատմիչը շատ պարզ ու իրական է ներկայացրել իրականությունը, առանց ուրժացնելու և անհիմն եզրակացությունների:

949 թվականին (Հայոց ՅՂԸ)<sup>2</sup> Անանիա կաթողիկոսը հովվապետական առաքելությամբ մի խումբ եպիսկոպոսների ու հոգևոր այլ գործիչների ուղեկցությամբ այցելում է Սյունիք, իսկ այնուհետև պետք է գնար Հայոց Արևելից կողմերը: Ստ. Օրբելյանի նկարագրությամբ՝ հայոց հայրապետն արժանանում է Սյունյաց աշխարհիկ ու հոգևոր տերերի ամենաջերմ ընդունելությանը: Սյունիքի Հակոբ Եպիսկոպոսը խոնարհվում ու մեղքերի թողություն է խնդրում հայոց հայրապետից<sup>3</sup>: Սյունյաց Եպիսկոպոսի կողմից արտահայտած ներողամտական խոսքը, բնականաբար, վերաբերուն էր օրինական օժմանը և հասկանալի է, որ, անկախ օբյեկտիվ կամ սուրբեկտիվ բոլոր հանգամանքներից, կատարվածն իրոք «հանդգնություն» էր, բայց ոչ՝ միտումնավոր, այլապես այն գոնե կիանողիմանվեր հայոց հայրապետի կողմից և ոչ թե «շնորհակալ եղավ և ուզեց գնալ Աղվանք»:

Կաթողիկոսի այցելությունն Արցախ, սակայն, հետաձգվեց՝ կապված Հայոց Աբաս Բագրատունի թագավորի տիկնոց մահվան հետ: Ստ. Օրբելյանն այնուհետև շատ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում, որն էլ ավելի է օգնում առաջադրված տեսակետի հավաստիությունն ընդունելու խնդրում: «Իսկ ամենաչարն, որ հանապազ խանդայ ընդ բարին և գրգռէ զնարդիկ ի խռովարար չարութիւն, ոչ ետ թոյլ այսմ արարուածոյ... սկսան քսել վերստին զՅակոբ առ կաթողիկոսն, եթէ կրկին ապստամբեաց ի ձենց. և նա չտայ թոյլ հնազանդել Աղվանից ընդ ձեռամբ քով... և այնպէս խռովութիւն և պատերազմ մեծ զարթուցին ի մեջ եկեղեցւոյ: Զոր և ես իսկ

<sup>1</sup> Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 198:

<sup>2</sup> ԲՈԼՈՒԹՎԱՐՅԱՆ, Հայոց Արևելից Եկեղեցին ու մշակույթը, էջ 165:

<sup>3</sup> Ստ. Օրբելյան, էջ 276:

զրպարտանք հարիմ զայսպիսի բանս և ոչ ճշմարտութիւն զրադատ եպիսկոպոսին Յակոբայ, զի զի՞նչ փառք էր և պարծանք ննա թողուլ զմեծ աթոռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և ծառայել իւրում ծառայակցին որք և անկատար և թերի ունեին զօժումն շնորհին»<sup>1</sup>:

Ահա այսպես, պատմագիրը շատ հստակ ու իրականությանը համապատասխան ներկայացնում է Յայոց Եկեղեցու հոգևոր-քաղաքական կացությունը և «պաշտոնական օծությամբ անկատար ու թերի» Յայոց Եկեղեցու երկու թեմերի տարանջատման գաղափարն ընդունում է պարզապես որպես «զրպարտանք» ու «ոչ ճշմարտութիւն»: Մանավանդ որ, դժբախտաբար, Յայոց Եկեղեցու ներսում ևս երեմն տեղ էին գտնում քրիստոնեական գաղափարաբանությանն անհարիր նախանձն ու «բանսարկությունը». «Դարձեալ նախանձն, դարձեալ բարկութիւն և քսութիւն, դարձեալ որոշումն յաստուածային միաբանութենէն ...»<sup>2</sup>:

Առկա աղբյուրների համադրությունից կարելի է նկատել, որ, իրոք, թե՛ Սյունյաց և թե՛ Աղվանից թեմերում երեմն հակասություններ են եղել կաթողիկոսական աթոռի թեկնածուի առաջարկման ու օրինական հաստատման շուրջը, ինչը, բնականաբար, չի կարելի տարածել ողջ թեմի վրա ու բնորոշել որպես անջատողական քայլ:

Յայոց Արևելից եպիսկոպոսների խնդրանքը հարգելով՝ Անանիա կաթողիկոսը Յովնանին ձեռնադրեց կաթողիկոս և ուղարկեց Արցախ: Սակայն Յովնանի ձեռնադրումով խնդրու չփակվեց, քանի որ բավականին սուր բնույթ ընդունեցին հատկապես մերժում ստացած Գագիկի ու օրինական ձեռնադրություն ստացած Յովնանի հարաբերությունները, ինչի պատճառով Ամենայն հայոց կաթողիկոսն ուղևորվում է դեպի Արցախ: Յանելով Խաչեն՝ Անանիա կաթողիկոսն արժանանում է երկրամասի գլխավոր իշխան Գրիգորի մեծաշուրջ ընդունելությանն ու հյուրընկալությանը. «ընդ առաջ եղև մեզ մեծ և փառաւոր աստուածապահ և բարեպաշտ տէր Գրիգոր իշխան»<sup>3</sup>:

Իշխանը հատուկ իրովարտակով դիմում է բոլոր գավառների հոգևոր առաջնորդներին, որպեսզի շուտափույթ հավաքվեն Գանձասարի իր ապարանքը: Անանիա Մոլացու հավաստմամբ՝ հավաքվել էին Աղվանից աշխարհի «բազում հարք և սուրբ եպիսկոպոսունք, և այլ գիտնական քահանայք...»<sup>4</sup>:

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 277:

<sup>2</sup> Ստ.Օրբելյան, էջ 132:

<sup>3</sup> Անանիա Մոլացի, էջ 134:

<sup>4</sup> Նոյն տեղում:

ժողովին ներկա էին նաև Գագիկ ու Հովհան Եպիսկոպոսները, որոնց ընտրության շուրջն առաջացել էին տարակարծիքներ: Հովհան Եպիսկոպոսն օրինական ձեռնադրություն էր ստացել հայոց հայրապետից, սակայն ժողովականների մեծ մասը չէր ընդունում նրա թեկնածությունը: Գագիկի թեկնածության շուրջը ևս տարակարծություններ կային, սակայն, առկա փաստերի համաձայն, ժողովականների մեծ մասը պաշտպանում էր նրան: Գագիկի թեկնածությունը պաշտպանում էր նաև Խաչենի Գրիգոր իշխանը, որը խնդրում է կրկին ձեռնադրել Գագիկին, որ սակայն, ուղղադատ ու ճշմարտաքննին հայրապետը «զոր ոչ պատշաճ համարեալ»<sup>1</sup>: Նույն է հաղորդում նաև հենց ինքը՝ Ամենայն հայոց հայրապետը<sup>2</sup>: Իսկ Աբրահամ Զամինեանը, առանց ստույգ ու համոզիչ հիմնավորնան, ուղղակիորեն նշելէ, թե «Գագիկն էլ կամովին հրաժարվում է»<sup>3</sup>:

Ի դեպ, այստեղ էլ պետք է նկատել, որ հիշյալ տարածայնությունները կապված էին զուտ առանձին կաթողիկոսական թեկնածուների «ինքնուրույն» օծման հետ և բոլորովին ակնարկված չէ Եկեղեցական թեմի տարանջատման մասին: Հոգևոր պետը, ըստ Ստ.Օրբելյանի, անմիջապես չի ձեռնադրում Յայ Աղվանից աթոռի առաջնորդ, քանի որ տեղի հոգևոր ու աշխարհիկ տերերը նրան հավաստիացնում են, որ շուտով իրենք կընտրեն նի արժանավայել այրի եւ կուղարկեն հայոց հայրապետի մոտ՝ օրինական ձեռնադրություն ստանալու խնդրանքով:

Անանիա Մոկացին ճանապարհվում է Սյունիք ու այնտեղից էլ վերադարձնում իր աթոռը: Յավանաբար այս իրադարձությունները տեղի են ունեցել 949 թվականին<sup>4</sup>: «949 թուին (ՅՂԲ) արդէն վերջացրած է լինուն նա իր երկրորդ ճանապարհորդութիւնը Շիրակից դեպի Աղուանք»<sup>5</sup>:

Յայրապետի վերադարձից հետո, ինչպես վկայում են աղբյուրները, մասնավորապես Ստ. Օրբելյանը, նրա ուշադրության կենտրոնում է մնացել հիշյալ երկու թեմերի շարունակվող գործելակերպը: Ստ. Օրբելյանը, հիշյալի վերաբերյալ իր խոսքն ավարտելով, նշում է, որ «այսպէս խափանեաց զմեծ պատերազմն Եկեղեցւոյ, և արար խաղաղութիւն կեղեքեալ և տառապեալ ազգիս Յայոց. և զպատուական անդամսն Եկեղեցւոյ որ օծտեալ էին վերստին միացոյց ի գլուխն գովելի ի մեծ պատրիարքսն Յայոց, որ սրբոյն Գրիգորի են աթոռակալք»<sup>6</sup>: Այնուհետև Անանիա կաթողիկոսից օրինական ձեռնադրություն է ստանում Փարիսովի Տեր Դա-

<sup>1</sup> Նոյն տեղում:

<sup>2</sup> *Տե՛ս Անանիա Մոկացի*, էջ 135

<sup>3</sup> Արք.Զամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, էջ 168:

<sup>4</sup> Արք.Զամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, էջ 168:

<sup>5</sup> Յավելուած Արարատի, 1897, Վետրուար, էջ 91:

<sup>6</sup> *Ստ.Օրբելյան*, էջ 286:

վիթք և վերադառնում Արցախ: Մ.Դասխուրանցու վկայությամբ՝ 6 տարի հայրապետություն անելուց հետո, նա կնքում է իր մահկանացում<sup>1</sup>:

Ա.Դակորյանի կողմից ծշտված VI-X դարերի Աղվանից կաթողիկոսաշարքում ևս հիշատակված է Փառհսոսի Տեր Դավիթ կաթողիկոսը, որի աթոռակալության ժամանակահատվածը կարծես ծշտված է մի շարք աղբյուրների համադրությամբ՝ 958-964թ.<sup>2</sup>: Դիմք ընդունելով առկա որոշ աղբյուրները և համապատասխան ուսումնասիրությունները՝ մենք ևս հակված էինք այն ընդունել որպես ճիշտ եզրակացություն: Սակայն, վերստին անդրադառնալով Մ.Ուրիհայեցու հայտնի «ժամանակագրության»-ը, բոլորովին այլ եզրակացության հանգեցինք:

Հայտնի է, որ 961 թվականին Անին հոչակվեց Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք, և նույն թվականին էլ կատարվեց Աշոտ Գ Բագրատունու օծնան արարողությունը<sup>3</sup>: «Ի թուականութեան Հայոց 410 հարկաւորեալ հայրապետն սուրբ և ամենայն իշխանք Գագկայ, և առաքեալ դեսպան առ կաթողիկոսն Աղվանից Տեր Յովիհաննէս և առ թագաւորն նոցա Փիլիպպէ, կոչեցին գալ յօծումն թագաւորին Գագկայ»<sup>4</sup>: Դիշյալ արարողության հանգամանալից նկարագրությունը հասկանալի ոգևորությամբ է տվել Մ. Ուրիհայեցին, իսկ այնուհետև, խոսելով օծնան հանդիսավոր արարողությանը ներկա իշխանների ու հոգևոր գործիչների նասին, գովեստով ներկայացրել նաև «զամենագովելին զՏեր Յովիհաննէս կաթողիկոսն Աղուանից աշխարհին, և քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա»<sup>5</sup>: Այսպիսով, Մ.Ուրիհայեցին, ու նաև, նրա վրա հենվելով, Յովի. Շահխարունյանցը Ամենայն Հայոց Անանիա կաթողիկոսի կողմից Հայոց Աշոտ Բագրատունի թագավորի օծնան արարողությանը մասնակից են համարուն Աղվանից Յովիհաննէս կաթողիկոսին: Սույն տեսակետն է արտահայտել նաև Մ.Բարիխուտարյանցը<sup>6</sup>: Սակայն Բաղդասար Միտրոպոլիտ Հասան-Զալալյանը Յովիհաննէսի Աղվանից կաթողիկոս ընտրվելու տարեթիվ է հիշատակում 963-ը՝ այն թյուրիմացաբար կապելով Հայոց Անանիա կաթողիկոսի մահվան ու նրա հաջորդ Վահանի նոր կաթողիկոս ընտրվելու արարողությանը մասնակցելուն հետ<sup>7</sup>: Փաստորեն աղբյուրները մատնանշում են Աղվանից Յովիհաննէս կաթողիկոսի անունը 961թ իրադարձությունների առնչությամբ, բայց և զարմանալիորեն ուսումնասիրողների մի

<sup>1</sup> Մ.Կաղանկաւովացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, էջ 347:

<sup>2</sup> Ալ. Ակոռն, Ալեառյ-Ալյառն և հրեա-լատինական և ձեռաբարձրական առաջնական հայությունների մասին, Եր., 1987, սոր.277.

<sup>3</sup> Տես՝ Դ.Ա. Ջարությունյան, Հայոսաւանը 9-11-րդ դարերում, էջ 96:

<sup>4</sup> Տարեգիրք Սնրասույ սպարապետի, Փարիզ, 1859, էջ 22:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տես՝ Մ.Բարիխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա., Կաղարշապատ, 1902, էջ 170-171:

<sup>7</sup> «Սիւթեր Աղուանից պատմութեան համար», «Լուսայ», 1897, գիրք Բ, էջ 329:

մասի տեսադաշտից այն դուրս է մնացել: Յենվելով հավանաբար ուսումնասիրողների համոզիչ թվացող փաստերի վրա՝ նույն վրիպումը թույլ է տվել նաև Կ.Ցուկերմանը: Մասնավորապես՝ նրա կողմից ներկայացված Աղվանից կաթողիկոսների ցանկում դուրս է թողնված Յովհաննես կաթողիկոսի անունը<sup>1</sup>:

Աղվանքի Փիլիպոս իշխանի և Տեր Յովհաննեսի գործունեության վերաբերյալ գովեստով են արտահայտվում հայ մատենագիրները: Նրանք հոգևոր քաղաքական ասպարեզ եկան այնախսի ժամանակաշրջանում, երբ վերջապես Երկրամասն ազատագրվել էր արաբական լծից, սակայն տակավին թարմ էին նրանց թողած ավերիչ հետքերը: Եվ «խաղաղանում են բնակիչներն շնորհիւ անխոնջ ջանից Յովհաննես կաթողիկոսի, Փիլիպոս թագավորի և Սենեքերիմ իշխանաց իշխանի, շինուում և նորոգուում են Եկեղեցիներն և բերդերն, դառնում են ս. Եկեղեցու ծոցն բռնի մահմետականացեալներից ամենամեծ մասն... անրապնդուում են Քրիստոնեության հաւատն, յյոյն և սէրն. շինութիւն է առնում Երկիրն և օրաւոր շատանում է ուսումնականաց թիւն»<sup>2</sup>: Յայոց Արևելից Գրիգոր Բ Մեծ իշխանի որդի Փիլիպպեի իշխանապետության շրջանում Փառհսոսի իշխանության սահմանները ձգվում էին Շամքոր գետակի վերին ավագանում, Արցախյան Լեռնաշղթայի փեշերով դեպի հյուսիս ու արևմուտք մինչև Շամքոր, հյուսիսում սահման ունենալով Կուր գետը<sup>3</sup>: Յայ ժողովորի արևելյան հատվածի համար ինքնուրույն իշխանության գոյությամբ ստեղծվում են հոգևոր-քաղաքական ու տնտեսական առաջընթացի պայմաններ:

Մ. Ուռիհայեցու հավաստմամբ՝ Յայոց Անամիա հայրապետի ցանկությունն էր իրեն հաջորդ ձեռնադրել Սյունիքի Վահան Եպիսկոպոսին, ինչը և իրականացվեց: Սակայն Վահանի կաթողիկոսությունը «մի ներքին խռովութիւն առաջ բերեց»<sup>4</sup>, որի պատճառը նրա «հոււանսիրությունն» էր, ուստի հայ հոգևոր խավը, չհանդուրժելով Վահանի գործունեությունը, ժողով գումարեց՝ Եկեղեցում տիրող իրավիճակը քննարկելու նպատակով:

Վահանի «հոււանսիրության» մասին վկայություն կա Ստ.Օրբելյանի<sup>5</sup> և Կ.Գանձակեցու մոտ<sup>6</sup>: 970 թվականին գումարված ժողովը քննեց ու դատապարտեց Վահանի ընթացքը և «միաբանեալ նստուցին յարո

<sup>1</sup> Constantin Zuckerman, *L'Albanie caucasienne au X siècle, Travaux et Mémoires 13, p. 583.*

<sup>2</sup> Ս. Բարխուստարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 170:

<sup>3</sup> Վ. Բալյայան, Արցախի պատմություն, Եր., 2002, էջ 109:

<sup>4</sup> Արք. Զամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, էջ 170:

<sup>5</sup> Stv' Ստ.Օրբելյան, էջ 287-290:

<sup>6</sup> Stv' Կ.Գանձակեցի, էջ 87:

սրբոյ Լուսաւորչին զՄտեփանոս..., որ ի Սևան կղզլոց»<sup>1</sup>: Մ.Ուրիհայեցու հավաստմամբ՝ Վերոնշյալ ժողովը, ինչպես նաև Վահանի մահվանից հետո Յայոց 432թ./983թ./ տեղի ունեցած Յայոց նոր կաթողիկոսի օծման հանդիսավոր ժողովները վերստին գլխավորում էր Աղվանից Յովհաննես կաթողիկոսը: Պետք է նկատել, որ հիշյալ ժամանակահատվածում Յայոց հոգևոր-Եկեղեցական ժողովների վարումը Յայ Աղվանից հոգևոր առաջնորդի կողմից ևս մեկ վկայություն է այն իրողության, որ Յայ Աղվանից կաթողիկոսությունը շարունակում էր մնալ որպես Յայոց Եկեղեցական հաստատության ամենահզոր թեմերից մեկը: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ Աղվանից Դավիթ կաթողիկոսից հետո աթոռակալել է Տեր Յովհաննեսը և հենց այս Յովհաննեսից հետո Աղվանից կաթողիկոսական աթոռն անցավ Տեր-Պետրոսին, որը Գարդմանի Եպիսկոպոսն էր: Այստեղ արդեն նժվար է միանշանակորեն ծզգրտել Յովհաննեսի և Պետրոսի աթոռակալության կոնկրետ թվականները, բայց փաստն այն է, որ Պետրոսի անվան հետ կապված միակ տեղեկությունը Մ.Դասխուրանցու կաթողիկոսաշարքում պարզապես նրա անվան հիշատակությունն է և այն, որ աթոռակալել է «ամս Ժ. յեպիսկոպոսութենէն Գարդմանայ»<sup>2</sup>:

Խ դարի երկորորդ կեսին Հայաստանում իշխանական տների ինքնուրույնության ուժեղացմանը զուգընթաց սկսված կենտրոնացված պետության մասնաւության գործընթացը զնալով ավելի վտանգավոր բնույթ էր ստանում և որն, ի վերջո, հանգեցրեց Բագրատունյաց թագավորության ներսում տեղական թագավորությունների առաջացմանը։ Նշված-ների շարքին էին պատկանում նաև Հայոց Արևելից կողմերում և աշենի և Փառիսոսի թագավորությունները<sup>3</sup>։ Ըստ Մ.Դասիսուրանցու՝ Տեր Պետրոս Աղվանից կաթողիկոսին հաջորդում է Փառիսոսի վանքի առաջնորդ Մովսես Գ-ն, որն աթոռակալեց շուրջ 6 տարի՝ 983-988թ.<sup>4</sup>։ Ա.Դակորյանի հավաստմամբ՝ Մովսես Գ Աղվանից կաթողիկոսի օրոք էլ հենց շարահարվել է Մ. Դասիսուրանցու «Աղվանից պատմությունը»<sup>5</sup>։ Մովսես Գ կաթողիկոսին հաջորդած հոգևոր առաջնորդների մասին տեղեկություններ հաղորդում են Մխիթար Գոշը, Կ.Գանձակեցին։ Ըստ այդ տեղեկությունների՝ Մովսես Գ-ին հաջորդել են «Աստուծո այր Մարկոս Ա-ն, ապա Հովսեփ Գ-ն»<sup>6</sup>։

### ***1 Առաջնաբառ:***

<sup>2</sup> Մ. Կաղանկատվագի, էջ 347:

<sup>3</sup> *Տես Հ.Ա.Հարությունյան, Հայաստանի 9-11-րդ դարերում, էջ 118:*

<sup>4</sup> Ս. Կաղանկատվագի, էջ 347:

<sup>5</sup> Ա.Հակոբյան, Մ.Կառավարչական պատմությունը՝ «Ալիքամից պատմության ձերագիրը», ԲՈՒ, էջ 142-143; Տես նաև Ալ.Ակոպյան, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, стр.223.

<sup>6</sup> Կ. Գանձակեցի, էջ 199: Տես նաև՝ Դ. Ալիշան, Հայապատում, հ.Բ, Վենետիկ, 1901, էջ 386.

### Резюме

Со второй половины IX века, вследствие политических обстоятельств, ослабли связи между Всеармянским католикосатом и окраинными епархиями. В результате, некоторые окраинные епархии, в том числе Албанская и Сюникская епархии приобрели определенную самостоятельность что, однако, никогда не приводило к полному отделению. И во второй половине X века, в связи с усилением армянского царства Багратидов, снова упорядочилась деятельность Всеармянского Святого Престола.

### Summary

Since the second half of the 9th century, in consequence of political circumstances, the relationship between Pan-Armenian Catholicosat and outlying dioceses weakened. As a result, some outlying dioceses, including Albanian and Syunikian dioceses gained certain autonomy which, however, never led to a complete separation. And in the second half of the 10th century, in connection with the strengthening of the Armenian kingdom of Bagratids, the activity of Armenian Holy See was restored again.